ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———————— 2024թ. N ---- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի քաղաքի ավագանու 2024 թվականի ապրիլի 16-ի «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» հ.119-Ա որոշման հավելվածի 3-րդ տողի 4-րդ սյունակում՝ «3 (22.5 գծմ)» բառերը փոխարինել «5 (37.5 գծմ)» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2024 թվականի ապրիլի 16-ի
N 119-Ա որոշման

Ց Ա Ն Կ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ
ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ

Հ/Հ	Դիմող	Ծառայողական ավտոկայանատեղի տարածքի հասցե	Կայանատեղում «ավտոտեղ»-երի քանակ (տարածքի չափեր) և կայանման ձև	Կազմակերպչի կողմից վճարված տեղական վճար	Այլ տրանսպորտային միջոցների կայանման սահմանափակում, աշխատանքային ռեժիմ
1	2	3	4	5	6
1.	«ԷՅՉ ԱՅ ՈՒԱՅ» ՍՊԸ	Հին Երևանցու փողոցի՝ Հյուսիսային պողոտա հ.5/1 հասցեի շենքին հարակից ճանապարհահատված	3 (7.5մ x 5.0մ), միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամաբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, շուրջօրյա
2.	«Երևան Հյուրանոց» ԲԲԸ	Աբովյան հ.14 հասցեին հարակից ճանապարհահատված	3 (22.5 գծմ.), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, շուրջօրյա
3.	«ԷՍՋԻԱՅ – ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	Ամիրյան փողոցում հ.2, 2/8 հասցեների հարակից ճանպարհահատված	3 (22.5 գծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, , աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝

ծառայողական ավտոկայանատեղ՝ ավտոկայանատեղ, որի կազմակերպման իրավունքը տեղական վճարի դիմաց հանձնված է որևէ իրավաբանական կամ ֆիզիկական անձի, որը կարող է սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունք չունի ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի ապրիլի 16-ի հ.119-Ա որոշման հիման վրա ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք ստացած «ԷՍՋԻԱՅ-ԻՆՎԵՍՏ» ՍՊ ընկերությունը, վճարելով սահմանված չափով տեղական վճարը, դիմել է կազմակերպված և գործող ավտոկայանատեղին 2024 թվականի ընթացքում շահագործելու շարունակման իրավունք ստանալու խնդրանքով, նախկին տրամադրված թվով 3 ավտոտեղի փոխարեն ավտոկայանատեղին կազմակերպել թվով 5 ավտոտեղի համար:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.93-Ն որոշմամբ սահմանվել է Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման կարգը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ.ԱՎԻՆՅԱՆ